ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՕՄԱՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ (640 – 750 թթ.)

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

640 թ. արաբները հիմնականում ավարտեցին Պարսկաստանի նվաճումը: Պարսից զորքերը որոշ դիմադրություն ցույց տվեցին: Թեոդորոս Ռշտունի իշխանը, որպես Հայաստանի պարսկական բաժնի սպարապետ, «կազմէր զզաւրս իւրոյ կողմանն հանապալ և զգուշանայր զտիւ և զգիշեր ըստ իւրոյ քաջ իմաստութեանն, ոչ սակաւ աւձիրս գործէր ի թշնամեաց»[1]:

Արաբների դեմ ընդվզեցին նաև Մուշեղ Մամիկոնյանը և Գրիգոր Սյունին իրենց զորագնդերով: Սակայն ուժերն անհավասար էին: Մարտերում ընկան այս նախարարները և ուրիշներ, ոմանք էլ «գնացին փախստական յաշխարհն իւրեանց»[2]:

Պարսից վերնախավը, ի վերջո, գերադասեց պայմանագրեր կնքել արաբների հետ՝ ձեռք բերելով խաղաղություն[3]: Հայ նախարարների մի մասը նույնպես պայմանագրերով կարգավորեց հարաբերություններն արաբ զորապետերի հետ, որոնք ջանում էին խաղաղեցնել Հայաստանը, քանի որ նրա դիրքը հույժ կարևոր էր արաբաբյուզանդական զինաբախումներում:

Արաբների առաջին ներխուժումը Հայաստան կատարվեց 640 թ. Միջագետքից, ուստի նրանց հետ առաջինը պայմանագրեր կնքեցին Հայաստանի հարավի նախարարները: Մոկաց իշխան Վարդիկը նույնիսկ առաջնորդում էր արաբ զորայիններին[4]:

Արաբ զորապետ Իյադը 640 թ. խաղաղության պայմանագիր է կնքում Անձևացյաց («Զավազանի») իշխանի հետ, «հասնում է Բիթլիս, ապա ժամանում Խլաթ, որի պատրիկը պայմանագիր է կնքում նրա հետ»[5]: Արաբական զորաբաժինը ասպատակում է նաև Հարքը, Բասենը և Վանանդը: Արաբներին շարունակել է դիմակայել Թեոդորոս Ռշտունին, որը դարանամուտ լինելով Կոգովտում, փորձել է հանկարծակի բերել

---

[1] *Պատմութիւն Սեբէոսի (այսուհետև՝* Սեբէոս*), աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 134:*

[2] *Նույն տեղում, էջ 137:*

[3] А. К о л е с н и к о в. Завоевание Ирана арабами. М., 1982, с. 153.

[4] *Ս ե բ է ո ս. էջ 138: Այս իշխանին Վարդաբեկ ձևով հիշում է նաև արաբ մատենագիր ալ-Վակիդին (748–823). տե՛ս* N. A d o n t z. Les Fonds historiques del' epopee Byzantine Digenis Akritas.– □Etudes armeno - byzantines□, Lisbonne, 1965, p. 30.

[5] B a l â d h u r i. The Origins of the Islamic State. §Kitab futuh al Buldan¦. I, New York, 1916, pp. 313–315.

նրանց և ազատել գերիներին, ինչը, սակայն, հաջողությամբ չի պսակվել՝ արաբական զորքի գերակշռության պատճառով: Անհաջող են անցել նաև հայ նախարարների ցիրուցան ուժերը համախմբելու ձեռնարկումները[6]:

Սակայն Հայաստանը նվաճված չէր, ուստի 647 թ. արաբական զորքը վերստին ներխուժում է այնտեղ՝ գրավելով նրա կենտրոնական գավառները՝ Նախճավանը, Այրարատի որոշ մասը, ավարի մատնելով ու գերեվարելով բնակչությանը[7]: Թեոդորոս Ռշտունին շարունակում է դիմադրությունը, հաղթում արաբական երեք հազարանոց զորասյանը Արծափի մոտակայքում[8]: Բայց ելնելով ստեղծված իրավիճակից, նա վերակողմնորոշվում է դեպի արաբները՝ իբրև տվյալ պահին գերիշխող կողմի: 652 թ. Ռշտունին Ասորիքի ու Վերին Միջագետքի (Զազիրայի) կառավարիչ Մուավիայի հետ կնքում է երկկողմ պայմանագիր, որով նախարարները պահպանելու էին իրենց ինքնավար իրավունքները և 15 հազարանոց այրուձին: Արաբները չպետք է Հայաստան ուղարկեին կառավարիչ և զորապետ[9]: Խալիֆայության պաշտոնյաները և զորքը պարտավորվում էին պահպանել կնքված պայմանագրերը[10]: Հայաստանի բերդերում չպետք է զորականներ տեղակայեին, վտանգի դեպքում զորակից էին լինելու հայերին: Նախարարները պարտավորվում էին անհրաժեշտության դեպքում զորք տրամադրել արաբներին: Հայաստանը պետք է ամեն տարի մուծեր գլխահարկ և խարաջ: Այս հարկատեսակները ոչ մահմեդականներից գանձվում էին պայմանագրերով նախատեսվածի չափով[11]:

Այդպիսով Հայաստանը պահպանում էր իր նախարարական պետականությունը Օմայանների օրոք: Հայ-արաբական պայմանագիրը ձեռնտու էր արաբներին, քանի որ բխում էր նաև նրանց շահերից: 652 թ. կնքված պայմանագրի շնորհիվ գահակալական կռիվների մեջ մխրճված Մուավիան, ի դեմս Հայաստանի, ձեռք բերեց հուսալի դաշնակից ընդդեմ իր ախոյանների: Այդ պայմանագիրը թեև ուղղված էր նաև Բյուզանդական կայսրության դեմ, սակայն տվյալ պահին զորեղը արաբներն էին, Հայաստանի ճակատագիրը էապես կախված էր նրանցից: Բացի այդ, արաբները թեև գրավել էին Հայաստանը, սակայն չէին միջամտում նրա ներքաղաքական գործընթացներին, քանզի տարված էին նվաճումներով: Օմայանները հանդուրժող էին միաբնակ քրիստոնեության նկատմամբ: Ասորիքում քրիստոնեական եկեղեցին նույնիսկ դարձավ նրանց հենարանը, ուստի տեղացի քրիստոնյաների մեջ արմատա-

---

[6] *Սեբէոս, էջ 138–139:*

[7] *Նույն տեղում, էջ 145:*

[8] *Նույն տեղում, էջ 146: Տե՛ս նաև Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց (այսուհետև՝ Ղևոնդ), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 11:*

[9] *Սեբէոս, էջ 164:*

[10] Abou Vousouf Vakoub. Le livre de l'impot foncier, Paris, 1921, p. 189, 191.

[11] *Նույն տեղում, էջ 95:*

ցավ այն կարծիքը, որ իբր իսլամը ոչ թե առանձին կրոն է, այլ քրիստոնեության մեջ եղած աղանդներից մեկը[12]*:*

652 թ. հայ-արաբական պայմանագրից հետո Մուշեղ Մամիկոնյանը և բյուզանդամետ մյուս նախարարները նույնպես հարեցին Թեոդորոս Ռշտունու գլխավորած խմբավորմանը և «եկեալ ի մի վայր միաբանեցան»[13]*: Թեև Կոստանդ II կայսրը ստվարաթիվ զորքով ներխուժեց Հայաստան և իր կողմը գրավեց նրա իշխանների մեծ մասին, սակայն արաբամետ նախարարները արաբների զորակցությամբ դիմակայեցին կայսեր զորքին՝ ապացուցելով իրենց հավատարմությունը հայ-արաբական դաշնագրին: Գահակալական ընդհարումների մեջ ներքաշված Մուավիան օգնության դիմեց Թեոդորոս Ռշտունուն, որը պատկառելի զորաբաժնով մեկնեց Դամասկոս և զորակցեց նրան: Այդ փաստն ավելի հաստատուն դարձրեց հայ-արաբական մերձեցումը և ապացուցեց Հայաստանի քաղաքական և զինական կենսունակությունը հարավկովկասյան տարածաշրջանում: Ուստի Մուավիան ավելի ընդլայնեց Թեոդորոս Ռշտունու իրավազորությունը. նրան, գրում է պատմագիրը, «իշխանութիւն ետ զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և ցՊահակն ճորայ»*[14]*: Այդպիսով Թեոդորոս Ռշտունին իշխելու էր այդ երկրներում*[15]*: Փաստորեն, դա հիմք դարձավ հետագայում (701 թ.) Արմինիա վարչաքաղաքական միավորի ստեղծման համար: Երկու դեպքում էլ տարածաշրջանում գերիշխող էին հայ նախարարները, իհարկե, Օմայանների գերակայության ներքո: Մուավիան «պայման էր եդեալ նմա (Թեոդորոս Ռշտունուն – Վ. Վ.)՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»*[16]*,– գրում է Սեբեոսը:*

Արաբների համար Հայաստանը նաև եկամտի անսպառ աղբյուր էր: Արաբ մատենագիր Իդրիսին գրում է. «Հայաստանը հարուստ է, այնտեղ կարելի է ձեռք բերել ամեն ինչ»[17]*: Ուստի Հայաստանում խաղաղության հաստատումը ձեռնտու էր Օմայաններին, նպաստում էր նրանց տնտեսական զորացմանը, զորքը նյութապես ապահովվելուն: Մուավիայի օրոք արաբական իշխանությունները հոգածու էին նվաճված երկրների ջրոռոգման ցանցի ընդլայնման, տնտեսական զարգացման նկատմամբ*[18]*: Հայաստանում և հարևան բախտակից երկրներում տնտեսության զարգացմանը և հարկային հարաբերությունների կարգավորման խնդիրներին առնչվող հարցերի*

---

[12] Е. Б е л я е в. Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье. М., 1966, с. 170.

[13] *Ս ե բ է ո ս, էջ 171–172:*

[14] *Նույն տեղում, էջ 169:*

[15] J. L a u r e n t. L' Armenie entre Byzance et l'islam, Paris, 1919, p. 34, 80; R. G r o u s s e t. Histoire de l' Arménie des origines a' 1071, Paris, 1947, p. 303.

[16] *Ս ե բ է ո ս, էջ 169:*

[17] Geographie d Edrisi (trad.), t. II, Paris, 1840, p. 326.

[18] H. L a m m e n s. Etudes sur le regne du calife Omaiade Moawia I-er.– «Melanges de la faculte Orientale», II, Leipzig, 1907, pp. 120–121, 127–128.

լուծումը վերապահված էր Թեոդորոս Ռշտունուն և նրա գաղափարակից նախարարներին: Վերջիններս, բնականաբար, իրենց ձեռքի տակ պետք է ունենային նշյալ երկրների վարչական, աշխարհագրական ու տնտեսական կառուցվածքի, հնարավորությունների վերաբերյալ արժանահավատ տեղեկություններ: Հավանաբար, հենց այդ ժամանակ է Անանիա Շիրակացին ստեղծել Աշխարհացույցը, որը, ըստ ամենայնի, լույս էր սփռում այդ խնդրի վրա:

652 թ. պայմանագրի կնքումից չորս տարի հետո՝ 656 թ., Թեոդորոս Ռշտունին Հաբիբ զորապետի ու հայ ազատների հետ մեկնում է Մուավիայի մոտ: Վերջինս անհաշտ պայքարի մեջ էր Օսման խալիֆային հաջորդած Ալիի (Մուհամմեդի փեսայի) դեմ խալիֆայի գահաթոռին տիրանալու համար: Անշուշտ, Թեոդորոս Ռշտունին և իր զինակիցները Մուավիայի մոտ են մեկնել՝ նրան զորակցելու համար: Մարտերում տալով զոհեր՝ 656 կամ 657 թ. ընկել է նաև Թեոդորոս Ռշտունին: Նրա աճյունը պատվով տեղափոխվել է հայրենի Ռշտունիք և ամփոփվել տոհմական դամբանատեղում[19]: Մահվան մահճում Թեոդորոս Ռշտունին հավատարիմ հայ-արաբական դաշնագրին, իր որդուն՝ Վարդին պատվիրում է շարունակել բարեկամությունը արաբների հետ[20]:

Թեոդորոս Ռշտունու մահից հետո հայ նախարարների պետական իրավազորությունը պահպանվեց, իհարկե, կրելով որոշ փոփոխություններ: Դրանք թելադրված էին արաբական իշխանությունների կողմից հնարավոր չարաշահումներով, որոնց դիմակայելու համար անհրաժեշտ էր զորացնել նախարարական պետականության ավանդական հիմքերը: Այդպիսի մղումներով էին առաջնորդվում սակավազոր տոհմերը՝ իրենց հողատիրույթները դնելով զորեղ նախարարների հովանու ներքո, միաժամանակ պահպանելով իրենց հողատիրական իրավունքները, տիրույթներն օտարելու, ժառանգներին փոխանցելու արտոնությունները: Այդ ճանապարհով ավելի մեծ ազդեցություն են ձեռք բերում խոշոր հողատեր-նախարարները, որոնց նկատմամբ հանդուրժող էին դառնում արաբ տիրակալները՝ հարկ եղած դեպքերում հայ ազատանու ուժերն օգտագործելով իրենց թշնամիների դեմ:

Խոշոր տոհմերի գլուխ կանգնած նախարարները իրականացնում էին տանուտիրական իրավունքը, հիմնականում իրենց ծախսերով սպառազինում 15 հազարանոց հայկական այրուձին՝ որպես իրենց պետական իրավազորության առհավատչյայի: Տանուտերը իր քաղաքական ուղեգծով չէր կարող հակադրվել տոհմին, որից, որպես անառարկելի հեղինակությունից, նա քաղում էր իր ուժերն ու ազդեցությունը, հատկապես արաբ իշխանությունների հետ վարած բանակցություններում, երբ, բնականաբար, նախարարությունը հանդես էր գալիս միասնաբար: Ուստի տանուտերի համար արդարացին ու ճշմարտախույզն այն էր, ինչ ընդունվում էր տոհմի բոլոր ան-

---

[19] *Ս ե բ է ո ս, էջ 174:*

[20] *Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. - 1522, թ. 529 բ:*

դամների կողմից: Փաստորեն, նախարարական տոհմն իր ռազմուժով և կառույցներով պետականության բնական մարմնացումն էր ու զորեղ պահապանը: Այն նաև հույժ կարևոր դերակատարություն ուներ քրիստոնեական կրոնի, Հայոց եկեղեցու հինավուրց հիմքերի ամրապնդմանն ուղղված գործընթացներում[21]*:*

Ամրապնդվում էր նաև Հայաստանի տարբեր նահանգների միջև պետական-քաղաքական առնչակցությունը: Այսպես, Արցախի իշխանապետ Ջիվանշիրը հետևում էր մյուս հայ նախարարների քաղաքական ուղեգծին: Համաձայն Ղևոնդ պատմչի հաղորդման, Մուավիան իր խալիֆայության երկրորդ տարում՝ 662 թ., իր մոտ է կանչում Գրիգոր Մամիկոնյանին ու Սմբատ Բագրատունուն, «որ էին պատանդք ի դրանն արքունի, և տայր Գրիգորի զպատիւ իշխանութեանս Հայոց. և առաքէ զնոսա բազում մեծարանօք յաշխարհս Հայոց»[22]*:*

Նույն ժամանակ Ջիվանշիրը, հետևելով Գրիգոր Մամիկոնյանին (որն իր քրոջ՝ Հեղինեի ամուսինն էր), նույնպես մեկնեց Մուավիա I-ի մոտ՝ Դամասկոս, և ճանաչել տվեց իր իշխանությունը[23]*: Գրիգորի օրոք (661–685) «եղև բազում խաղաղութիւն»,– վկայում է Ղևոնդ պատմագիրը: Դա նպաստում էր նաև Ջիվանշիրի իշխանության ամրապնդմանը: Վերջինս «մեծավայելուչ փառօք» Դամասկոսից ճանապարհվում է հայրենիք և «զայր հասանէր յԱյրատեան գաւառն, ուր ընդառաջ լինէր նմա ի Մամիկոնեան տոհմէն քաջն Գրիգոր համօրէն ազատօքն և ածէ զնա ի գիւղաքաղաքն իւր Արուճ»: Այդտեղ Ջիվանշիրը հանդիպեց Հայոց Անաստաս հայրապետին և «օրհնեցաւ ի նմանէ», ապա ճանապարհվեց իր հայրենատիրույթ Գարդման:*

Հայաստանի նախարարներն իրենց պետականությունն ամրապնդեցին նաև Աշոտ Բագրատունու օրոք 685–689 թվականներին: Օմայան խալիֆայությունը ճանաչում էր նրանց իրավունքները՝ ելնելով հարավային Կովկասում խաղաղությունը պահպանելու իր շահերից: 685 թ. խազարները ասպատակել էին Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը: Նրանց դեմ մղած պատերազմում զոհվեց Գրիգոր Մամիկոնյանը[24]*, որին զորակից էր Ջիվանշիրը:*

Աշոտ Բագրատունին էր՝ «այր երևելի և նախամեծար ի մէջ նախարարացն Հայոց», օժտված էր «պերճ իշխանությամբ»[25]*: Արաբները ճանաչում էին նրա իրավունքները: Մինչդեռ Բյուզանդիան դեմ էր հայ-արաբական մերձակցությանը: 686 թ., երբ*

---

[21] *Վերը նշված ձեռագրում ասվում է, որ Թեոդորոս Ռշտունուն հաջորդած Վարդի օրոք Հայաստանում վեր են խոյանում բազմաթիվ եկեղեցիներ: Այդ մասին տե՛ս նաև «Ազգագրական հանդես» (Թիֆլիս), XXV, - 2, 1913, էջ 23:*

[22] *Ղևոնդ, էջ 14:*

[23] *Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 195–196:*

[24] *Ղևոնդ, էջ 16:*

[25] *Բյուզանդական աղբյուրներ, Դ., Թեոփանես Խոստովանող (այսուհետև՝ Թեոփանես), թարգմ., առաջաբան և ծանոթագրություններ՝ Հր. Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 75:*

դեռ շարունակում էին խազարների սպառնալիքները, Հուստինիանոս II-ը զորք է ուղարկում Հայաստան՝ Լեոնտիոս զորապետի գլխավորությամբ: Վերջինիս հաջողվում է պարտության մատնել արաբներին, հպատակեցնել Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը, ինչպես նաև Մարաստանը[26]: Բյուզանդացիների հետ դաշնակցում էին խազարները: Կայսրը «Յիշխանութէանն Աշոտի պատրկի,– հաղորդում է Ղևոնդը,– առաքէ զօր բազում ի վերայ աշխարհիս Հայոց. Որք եկեալ աւերեցին զաշխարհս աւարառութեամբ և զբազում գեղեցկայարմար շինուածս հրձիգ արարին յաւեր դարձուցանելով…»[27]: Բայց կայսրության զորքը հեռացել է Հայաստանից[28], անշուշտ, հանդիպելով դիմադրության հայ նախարարների կողմից՝ արաբների զորակցությամբ: Դա ավելի էր մերձեցնում հայերին ու արաբներին: Հայաստանում դրության տերն էին մնում հայ նախարարները՝ արաբների զինակցությամբ: Արաբները խուսափում էին Հայաստանում զորք տեղակայելուց, ինչը հանգեցնելու էր իրենց ուժերի ցրմանը: Իհարկե, այդ չէր նշանակում, թե Հայաստանը զերծ էր մնում կախվածությունից, որը պայմանագրային հիմունքներով պահպանվում էր հայ իշխանների կողմից: Սակայն հարկ և զորք տրամադրելը, բնականաբար, հարուցում էր նախարարների դժգոհությունը, քանի որ իրենք լիովին չէին տնօրինում երկրի բարիքները: Նրանց խոցում էր նաև այն փաստը, որ հայոց այրուձին, հակառակ իրենց կամքի, հաճախ արաբները նետում էին թշնամիների դեմ պատերազմելու, ինչը հանգեցնում էր բազմաթիվ զոհերի: Իհարկե, նախարարների ռազմուժի զգալի մասը մնում էր իրենց իշխանություններում, հարկ եղած դեպքերում երկիրը օտարազգի հրոսախմբերից պաշտպանելու համար: Այսպես, Աշոտ Բագրատունու իշխանության չորրորդ տարում՝ 689 թ., ինչպես հաղորդում է Ղևոնդ պատմագիրը, «գունդ մի ասպատակութեամբ յորդւոյն Իսմայելի, յարձակեալ ի վերայ աշխարհիս Հայոց, որ էին որդիք յանցանաց…»: Այս հրոսակները «զարսն հարկապահանջութեամբ խոշտանգէին»: Տեղեկանալով այդ մասին, Աշոտ Բագրատունին «վաղվաղակի հրաման տայր զօրուն ելանել ի վերայ նոցա: Հարին զամենեսեան սատակմամբ սրոյ, և զմնացորդսն փախստական առնէին»[29]: Մարտում ծանր վիրավորված Աշոտ Բագրատունին կարճ ժամանակ հետո վախճանվեց և թաղվեց Դարույնքի տոհմական դամբանատեղում:

Հայոց իշխանի իրավազորությունը ճանաչում էր նաև Բյուզանդիայի կայսրը՝ ելնելով Հայաստանում արմատավորված ինքնավարության փաստից: Հենց նույն տարում Հուստինիանոս II-ը վերստին զորքով ներխուժեց Հայաստան: Կայսրն իր մոտ ժողովեց հայ նախարարներին, ապա, նրանցից մի քանիսին պատանդ վերցնելով,

---

[26] Ղևոնդ, էջ 17:

[27] Նույն տեղում:

[28] Նույն տեղում, էջ 17–18:

[29] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 100–101:

Հայոց իշխան կարգեց Շիրակի տիրոջը՝ Ներսեհ Կամսարականին (689–693)[30], իհարկե, նախարարների կամքը հաշվի առնելով, քանզի նրանք էին երկրի պետական զորության մարմնավորողները, նրա սահմանների պահապանները, երկրի իրական տերերը: Ուստի արաբական կամ բյուզանդական գերակայությունը հաստատուն չէր: 698 թ. բյուզանդական զորքը դարձյալ արշավում է Հայաստան՝ ջանալով հնազանդեցնել նախարարներին, կալանել Հայոց իշխան Սմբատ Բագրատունուն: Սակայն կայսրության գերակշիռ ուժերին հայ նախարարները հակահարված տվեցին Պայիկ անունով ճահճուտ դաշտում: Մարտում «բազում եղեն հարուածք զօրացն Հայոց,– գրում է պատմագիրը,– զի նուազունք էին: Անկան և ի զորուէն Յունաց յոլովք»[31]:

VIII դ. շեմին Հայաստանի ինքնավարությունը վերացնելուն էին հակված նաև արաբները: Այդ նպատակով Աբդ ալ-Մալիք խալիֆայի (685–705) եղբայր Մուհամմադ իբն Մրվանը Միջագետքից զորքով արշավեց հարավային Հայաստան՝ Մոկաց Ջերմաձոր գավառ: Նախարարներն ու ժողովուրդը ամրացան իրենց ամրոցներում: Մրվանը նրանց «պատիր բանիւք կոչէր ի խաղաղութիւն»: Հավատալով նրան՝ նախարարները դուրս եկան բերդերից: Սակայն նրանց կոտորեցին, իսկ կանանց ու երեխաներին գերեվարեցին[32]: Այդուհանդերձ, Հայաստանի նախարարները պահպանեցին իրենց իշխանությունները:

Աբդ ալ-Մալիք խալիֆայի նվաճումներով ավարտվեց Արաբական խալիֆայության կազմավորումը: 701 թ. ստեղծվեց Արմինիա փոխարքայությունը՝ արաբ ոստիկանի գլխավորությամբ: Այն ընդգրկում էր Մեծ Հայքը (բացառյալ Ծոփքը, Սպերը, Բարձր Հայքի արևմտյան մասը, Աղձնիքը և Կորդուքը), ինչպես նաև Վիրքը (առանց Լազիկեի) և Աղվանքը (Առան): Ոստիկանի նստավայրը Դվինն էր: Քանի որ Արմինիայում իշխող տարրը հայ ազատանին էր, ուստի ոստիկանը առաջին հերթին կամեցավ թուլացնել նրան: Ինչպես վկայում է Ղևոնդ պատմագիրը, Արմինիայի առաջին ոստիկան Աբու Շայխ Իբն Աբդալլահը «խորհուրդ վատ ի մէջ առեալ բառնալ զազատախումբ տոհմն յաշխարհէս Հայոց հանդերձ նոցին հեծելովք»[33]: Նախարարները խորհրդակցեցին և, կռահելով դավը, զգուշացան: Նրանցից մոտ 2000 հոգի Սմբատ Բագրատունու[34] գլխավորությամբ որոշեցին հեռանալ Բյուզանդական կողմերը: Արաքսի ափին՝ Վարդանակերտ գյուղում (այժմյան Արմավիրի մարզի Մարգարա

---

[30] *Ղևոնդ, էջ 19:*

[31] *Նույն տեղում, էջ 20:*

[32] *Նույն տեղում, էջ 23:*

[33] *Նույն տեղում:*

[34] *Այս Սմբատը Վասպուրականի իշխան Աշոտ պատրիկ Բագրատունու որդին էր: Հաճախ նա նույնացվել է Սմբատ Բյուրատյանի՝ Վարազտիրոց Բագրատունու որդու հետ, ինչը, իհարկե, ճիշտ չէ: Այս մասին տե՛ս* J. M a r q u a r t. Osteuropaeische und ostasiatische Streifziige, Leipzig, 1903, S. 443.

գյուղ) նրանց վրա հարձակվեց արաբական մի զորամաս, որը, սակայն, պարտվեց՝ տալով շատ զոհեր: Հայ պատերազմիկները հասան Տայք նահանգ՝ ամրանալով Թուխարք ամրոցում: Նախարարների մեկ այլ ջոկատ սրի քաշեց Ռշտունիք ներխուժած արաբական զորամասին՝ Գուկանք ավանում[35]:

Հայ նախարարական պետականությունը վերացնելու համար վճռական քայլերի դիմեց Վալիդ I խալիֆան (705–715), որն իր գահակալության առաջին տարում մտահղացավ ոչնչացնել նախարարական տոհմերը՝ գտնելով, որ «միշտ խոչ և գայթակղութիւն լինելոց են իշխանութեանս մերոյ»[36]: Նախարարներին ոչնչացնելը հանձնարարվեց Արմինիայի ոստիկանի փոխանորդ Կասրմին, որն այդ չարանենգ մտահղացումն իրականացնելու նպատակով Վասպուրականի Նախճավան քաղաք հրավիրեց նախարարներին և փակել տալով տեղի ու մոտակա Խրամ ավանի եկեղեցիներում, ողջ-ողջ այրել տվեց: Ողջակիզման վայրեր են նշվում Նախճավանը և Խրամը[37]: Նախարարների հանդեպ այդ դիվային ոճրի մասին հիշում են նաև արաբ մատենագիրները, ինչպես և Թեոփանեսը[38], Միքայել Ասորին[39], առանց ողջակիզման վայրը նշելու: Բաքվում 1981 թ. լույս տեսած՝ X դարի արաբ պատմագիր Մուհամմադ ալ-Քուֆֆի «Գիրք նվաճումների մասին» երկում վկայված է, որ Արմինիայի արաբ կառավարիչ Մուհամմադը հայ նախարարներին ասել է. «Ես վստահ չեմ ձեր նկատմամբ, ուստի մտեք ձեր այս եկեղեցիները և նրանց մեջ ինձ երդում տվեք, որ չեք խախտի ձեր պարտավորությունները»: Ապա նավթ են լցրել ու այրել նախարարներին[40]: Ղևոնդ պատմիչը շեշտում է, որ այդ ոճրից հետո «թափուր եղեալ աշխարհս Հայոց ի տոհմէ նախարարաց», և երկիրն ընկավ գայլերի երախը[41]:

Սակայն բնաճուն և բազում փորձությունների բովով անցած նախարարական համակարգը շարունակեց հարատևել և պահպանվեց երկրի պետական-ինքնուրույն դիմագիծը: Խալիֆայությունը, որ համաշխարհային մյուս կայսրությունների պես հակաբնական երևույթ էր[42], չէր կարող անտեսել նախարարությունների զորությունն ու խաղացած վճռորոշ դերը երկրի պետական կյանքում և չօգտվել դրանից:

---

[35] *Ղևոնդ, էջ 27–28:*

[36] *Նույն տեղում, էջ 31:*

[37] *Նույն տեղում, էջ 32–33:*

[38] *Թեոփանես, էջ 84:*

[39] Michel le Syrien, II, p. 474.

[40] Абу Мухаммад ибн Асам ал Куфи. Книга завоеваний. Баку, 1981, с. 13–14. *Անշուշտ, պատմությունը նենգափոխելու ցայտուն օրինակ է Զ. Բունիյաթովի պնդումը, որ իբր հայ նախարարների ողջակիզման վայրը ոչ թե Նախճավան քաղաքն էր, այլ Կարսի մարզի (ավելի ուշ՝ Կաղզվանի օկրուգի) Նախիջևան գյուղը (տե՛ս* З. Буниятов. Об одном историческом недоразумении.– Доклады АН Азерб. ССР, т. 33, 1977, № 2, с. 67–69):

[41] *Ղևոնդ, էջ 35:*

[42] А. Мец. Мусульманский ренессанс. М., 1973, с. 18.

705 թ. Արմինիայի ոստիկան Աբդ-ալ-Ազիզը (705–709) հատուկ հրովարտակով հայրենիքից հեռացած նախարարներին հորդորեց վերադառնալ Հայաստան: Իսկ Օմար II խալիֆայի (717–720) կամքով հայրենիք վերադարձան այն նախարարները, որոնք գերության էին տարվել Նախճավանի և Խրամի ողջակիզմանն հաջորդած ժամանակներում: Ոստիկանը «խաղաղացոյց զաշխարհս»[43]: Խալիֆայությունը, ելնելով իր շահերից, գերադասեց ճանաչել հայ նախարարների ժառանգական իրավունքներն ու իրավազորությունը՝ նախկինի պես հարկ և զորք տալու պայմանադրությամբ:

Այդպիսով Հայաստանի ճակատագիրը մնում էր նախարարների անմիջական տնօրինության ներքո: Հարկ եղած դեպքում նրանք զորակցում էին արաբներին՝ ընդդեմ խազարների, որոնք VIII դ. առաջին կեսին հարաժամյա հարձակումներով ալեկոծում էին Արմինիա փոխարքայության անդորրը՝ մեծապես վտանգելով նաև Հայոց Արևելից կողմանց՝ Արցախի և Ուտիքի բնակչության կացությունը:

Պատերազմները մեծ ծախսեր էին պահանջում: Հիշամ խալիֆայի գահակալման երկրորդ տարում՝ 725 թ., Արմինիայի ոստիկան Հարիս ալ-Թաին (հայկական աղբյուրներում՝ Հերթ) ծանրացրեց հարկերը, կիրառեց շնչահարկ, որից հայերի վիճակը խիստ ծանրացավ: Նյութապես տկարացան նաև նախարարական տները:

Սակայն արաբները շարունակում էին սիրաշահել հայ նախարարներին, որպեսզի նրանց զորուժն օգտագործեն տվյալ պահին խալիֆայության գլխավոր թշնամու՝ հեթանոս խազարների դեմ: Քանի որ մարտերը հիմնականում ընթանում էին Արմինիայի տարածքում, ուստի հայոց այրուձին ևս մասնակցում էր խազարների դեմ արաբների ձեռնարկած ռազմարշավներին: Ընդ որում՝ արաբները ջանում էին Արմինիան ևս պաշտպանել խազարներից[44]:

Արմինիայի նոր ոստիկան Մրվան իբն-Մուհամմադը (732–744) նույնպես ջանում էր հարաբերությունները չսրել հայ նախարարների հետ: Երբ նա ժամանեց Դվին, «յանդիման լինէին նմա նախարարք Հայոց», որպես Հայաստանի իրավատերեր: Անշուշտ, նրանց ցանկությամբ ոստիկանը հայոց իշխան նշանակեց Աշոտ Բագրատունուն (Վասակի որդուն)՝ «հրամանաւ Հիշմայ…»[45], ինչը վկայում է, որ Աշոտը այդ պաշտոնում կարգվել է Հիշամ խալիֆայի հրամանով: Այդպիսով՝ վերջինս ևս հաշվի էր առնում հայ նախարարների, ի մասնավորի, Բագրատունիների գերազդեցիկ դերը Արմինիայում:

Աշոտ Բագրատունին հայոց իշխանի պաշտոնը վարել է 732–749 թվերին[46]: Նույն ժամանակ հայ նախարարներից առաջնության էին հավակնում Գրիգոր և Դավիթ

---

[43] *Ղևոնդ, էջ 42:*

[44] Chronique de Abou-Djafar Mohammed-ben-Djarir-ben-Jezid Tabari, trad. M. Zottenberg, t. III, Paris, 1958, p. 270 – 272.

[45] *Ղևոնդ, էջ 112:*

[46] А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 270.

Մամիկոնյանները, որոնք, սակայն, Մրվան ոստիկանի հրամանով բանտ նետվեցին: Արաբները չէին վստահում Մամիկոնյաններին՝ հաշվի առնելով նրանց բյուզանդամետ դիրքորոշումը: Մինչդեռ Բագրատունիները շարունակում էին համագործակցել արաբների հետ: Աշոտ Բագրատունին հայոց այրուձիուն վճարվող ռոճիկի հարցը կարգավորելու նպատակով անձամբ մեկնեց Հիշամ խալիֆայի մոտ, որը «մեծացունէր զնա ըստ արժանւոյն և կատարէր զխնդիրն նորա»՝ հրամայելով վճարել հայոց այրուձիու երեք տարվա ռոճիկը՝ յուրաքանչյուր տարվա համար 100 հազար արծաթ դիրհեմ գումարով[47]: Դրանից հետո 737 թ., երբ խալիֆայության զորքը թափանցեց Հյուսիսային Կովկաս, նրա կազմում էր նաև հայոց այրուձին՝ Աշոտ Բագրատունու գլխավորությամբ[48]: Նրանք «միաբանեալ ասպատակէին աշխարհն հոնաց»՝ գրավելով նրանց նստոց Վարաչան քաղաքը: Ապա Մրվանն ու Աշոտ Բագրատունին իրենց զորագնդերով վերադառնում են «մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ», որի մի մասը բաժին է հանվում Աշոտ Բագրատունուն «և այլոց պատուաւոր նախարարացն»[49]:

Հիշամ խալիֆայի վախճանվելուց հետո Օմայան խալիֆայությունում սկսված խառնակությունների ժամանակ Մամիկոնյան եղբայրներն ազատվեցին բանտարգելությունից և վերադարձան Հայաստան: Նրանք փորձեցին իշխել Վասպուրականում, սակայն տեղի նախարարները չհամագործակցեցին նրանց հետ: Նույն ժամանակ Աշոտ Բագրատունին 15 հազարանոց այրուձիով մեկնում է Ասորիք՝ Մրվան խալիֆայի մոտ, որը պատերազմում էր հակառակորդների դեմ: Հայոց զորուժի օգնությամբ «բազում յաղթութիւն լինէր զօրացն Մրուանայ և խորտակումն հակառակորդաց նորին…»[50],– գրում է պատմագիրը:

Օգտվելով Աշոտ Բագրատունու բացակայությունից՝ Գրիգոր Մամիկոնյանը կարողացավ Արմինիայի կառավարիչ Իսահակի օգնությամբ նշանակվել հայոց իշխան՝ «փոխանակ Աշոտոյ»: Սակայն Մրվան խալիֆան «դարձեալ հաստատէ զիշխանութիւն Աշոտոյ… և առաքէ զնա մեծամեծ պատուօք յերկիրս Հայոց»[51]:

Այդուհանդերձ, Օմայանների գերակայությունը Հայաստանում ավելի ու ավելի ձևական էր դառնում: Օգտվելով արաբական տարբեր խմբավորումների միջև ընթացող զինաբախումներից՝ հայ նախարարների մեծ մասը մտադրվեց «ընկենուլ զլուծ հնազանդութէանն և ապստամբել»: Ապստամբության գլուխ կանգնեց Գրիգոր Մա-

---

[47] *Ղ ևոնդ, էջ 113–114:*

[48] J. Marquart. Osteuropaeische und ostasiat. Streifziige, S. 12; J. Laurent. L' Armenie entre Byzance et l'islam, p. 172; R. Grousset. Histoire de l' Arménie, p. 303; M. Shaban. Islamic History (600–750), a new interpretation. Cambridge, 1971, p. 147.

[49] *Ղ ևոնդ, էջ 113–114:*

[50] *Նույն տեղում, էջ 119–120:*

[51] *Նույն տեղում, էջ 121:*

միկոնյանը: Նրա կողմնակից նախարարները ջանացին Աշոտ Բագրատունուն միավորել իրենց հետ: Սակայն նա, անհեռանկար համարելով հզոր տերության դեմ ծառանալը, հրաժարվեց միանալ ապստամբներին: Այդուհանդերձ, վերջիններս չհրաժարվեցին իրենց դիրքորոշումից՝ կնքելով «դաշինս ուխտի առ միմեանս միջնորդութեամբ Տէրունեան նշանին»[52]:

Ապստամբները ամրացան Տայքի բերդերում՝ ակնկալելով Բյուզանդիայի օգնությունը: Իսկ Աշոտ Բագրատունին իր կողմնակից նախարարների հետ հեռացավ Բագրևանդ գավառ՝ կամենալով «միաբանել ընդ որդիսն Իսմայելի»: Սակայն Հայաստանում դրության տերը Գրիգոր Մամիկոնյանի կողմնակիցներն էին, որոնք ձերբակալեցին Աշոտ Բագրատունուն և կուրացրին: Այս անգամ արաբները չկարողացան պաշտպանել նրան, քանի որ Հայաստանում ո՛չ նրանք, ո՛չ էլ Բագրատունիների կուսակիցները ի զորու չէին դա անել. երկրում լիիշխան տիրակալներն արդեն ապստամբ ուժերն էին: 750 թ. Աբբասյանները ճնշեցին ապստամբությունը՝ հնազանդեցնելով հայ նախարարներին: Սակայն վերջիններս պահպանեցին իրենց ժառանգական իրավունքները, հողատիրույթներն ու իշխանությունը:

ГОСУДАРСТВЕННАЯ СИСТЕМА АРМЕНИИ ПРИ ОМЕЙЯДАХ (640–750 гг.)

ВРЕЖ ВАРДАНЯН

Резюме

Во время первых нашествий арабов армянские нахарары предприняли мирные переговоры с арабскими военачальниками. Поскольку первое вторжение арабов в Армению произошло в 640 г. из Междуречья, первыми с ними начали мирные переговоры нахарары Южной Армении. Хотя сначала князь Теодорос Рштуни сопротивлялся арабам, затем он переориентировался в их сторону. Правитель Верхнего Междуречья Муавия из рода Омейядов стремился использовать воинские контингенты армянских нахараров против своих врагов. В 652 г. он заключил военный союз с Теодоросом Рштуни. По договору стороны обязались оказывать военную помощь друг другу. Армения сохраняла свою государственность в лице нахараров, которые продолжали властвовать в своих владениях. Кроме этого, Теодорос Рштуни по воле Муавии должен был править также в Грузии и Албании (Арран). Фактически это было прообразом наместничества в Армении, основанного в 701 г. Армения была источником удовлетворения возросших фискальных требований халифата. Армянские нахарары – крупные владетельные феодалы (танутеры) сплотили вокруг себя низшее дворянство. Государственные традиции сохранялись благодаря сплоченности нахараров. Правители (остиканы) Армении стремились посеять раздор между нахарарами, ослабить их, однако последние сохранили свои вотчинные владения, сословный статус и военную мощь.

[52] *Նույն տեղում, էջ 122:*

ARMENIAN GOVERNMENT SYSTEM DURING THE OMAYANS (640–750)

VREZH VARDANYAN

Summary

During the first Arabian invasions Armenian nakharars began peace negotiations with Arabian military leaders. The Armenian nakharars of South Armenia from Mesopotamia began their negotiations in 640. Though prince Theodoros Rshtuni stood up to Arabians but at the end changed his orientation. Muavia, the ruler of High Mesopotamia looked forward for using Armenian nakharars' army against his enemy. He concluded a military alliance with Theodoros Rshtuni in 652. They were to give each other military help by the treaty. Armenia kept its statehood in nakharars who ruled in their estates. Besides, Theodoros Rshtuni ruled in Georgia and Albania (Arran). In fact, it was a prototype of a region ruled by a governor-general. For caliphate Armenia was the source for satisfying its fiscal requests. Armenian nakharars – the great estate owners-feudals (tanuters) surrounded themselves with lower nobles. The kingdom traditions were kept in own nakharars. The rulers (ostikans) of Armenia looked forward to create hostility between nakharars and weaken them, but the latter kept their estates' status and military power.